

ԱՐՄԵՆ ՀԱՅ, ՔՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁՆ Է

Շարունակուած էջ 16-էն

նակած հայերը, Մայիսի քսանըու- թին, հայոց աշխարհը հռչակեցին անկախ, արեւը իր կրակը շառագու- նեց նրա նոր դրօշին՝ իրենց պայքա- րի կարմիր արիւնը, իրենց երկինքի ջինջ կապույտը, իրենց աշխատան- քով դաշտերում հասունացած դեղին ոսկի ցորենները եւ այդ պետութիւնը բազմեց աշխարհի քարտէսին: Ով հայ մարդ, եթէ դու ունես հոգու երեւակայութեան թոփփփ, արդեօք չէ՞իր տեսնի ինչպէս էին նժողովնե- րին բազմած արքաներն հայոց՝ յաղթական գործի հետ տողանցում մայր ոստանի հրապարակում:

Մայիսի քսանըութի հայոց ան- կախութեան տօնն է, հրեղէն վահագ- նի պատերազմի պաշտամունքի բո- ցերով վառուած անկախութեան հող- մերը նորից գրկել են հայոց լեռնե- րը, նորից արտերն հայոց ծփում են ցորեննի ծովերով, այգիներն են նորից ծաղկում քաղցի, հայոց ու- տանների ու շէնքերի մանչերը ծիծա- դում են, հայոց հանճարի լոյսն է նորից վառում աշխարհը: Հայկեան ու իրենց նախնիների հեթանոս աստուածների դիմադրական ոգու հրացոլքով ծիծառանացած՝ Մայիս- եան հերոսամարտի յաղթանակով պսակուած անկախութեան տօն է: Մայիսեան արեւը գրկած անկախու- թեան դրօշը ծածանում է հայոց աշխարհին, գորովագին գրկել է նրան եւ ազատութեան լոյսի անձրեւ մաղում լեռներին ու դաշտերին հայրենի եւ դարձեալ մի հեռու Մայիսին հայերը իրենց ճակատա- մարտով նոր հաւատքի լոյսի կան- թեղն էին վառել իրենց Արագած լեռան գագաթին: Մայիսեան յաղ- թանակի լոյսով է վառուել հայոց երրորդ հանրապետութեան անկա- խութեան ծնունդը եւ նորից նոյն դրօշը ծածանուել մայր ոստանի սրտում՝ հայոց վարդաժպիտ կառա- վարման տան վրայ:

Երգով արբեցէք այսօր: «Հա- յաստան», հայոց քաջերի այդ երգը հրաշէկ կայծ դարձած, բոց թող յորդի սրտերին բոլոր: Զէյթունցի- ների քայլերգի ինդուլթեան պար բռնեցէք, կրակ պիտի ժայթքի ձեր դէմքերից: «Բամբ Որոտան»ը հռչակն հնչեցրէք, թող բամբերը որոտան, աշխարհին աւետեն հայոց լինելիութեան աստուածային պատ- գամը: Արդեօք ձեր հոգիների տա- ճարներում այսօր հազար թմբուկ չէ՞ն զարկում եւ յաղթանակի հա- զար շեփորներ չէ՞ն հնչում, հապա որտեղից այդքան բոցավառ հուր: Մարդարապատ-Արմաւիրի յաղթա- նակի արեւով շողացող դաշտ սլա- ցէք, գրկէք արծիւներին, գարկէք գետին, թող Մայր Արաքսի ջրերը փրփրալից պար գան ձեզ հետ, թող այն ափի խառնածինները դողան ձեր զարկերի դղրդիւնի ահից:

Սասնայ ու Մշոյ Տաւրոբիկի երգերը թնդացրէք, պարէք ձեր ձեռքերը վեր պարզած, գրկէք լեռ- ները նրանց, շոյեցէք նրանց ձիւնոտ գագաթները, թող այն հովանի ձեր սրտերում արաւացող կարօտը: Թող դողալ գետինը այս քաղաքի, թող ժողովուրդն այս քաղաքի իմանայ, որ այստեղ ապաստանած հայերը իրենց հետ բերել են աշխարհն Արմէնների եւ այստեղ էլ հիմնել մի «Փոքրիկ Հայաստան»: Բանաստեղծ- ների, գուսանների գովերգած Տիգր- րանի, Վարդանի, Մաշտոցի, Խորե- նացու, Դաւիթի, Կոմիտասի, Սա- յաթ Նովու, Արմաւիրի յաղթանա- կած զորականների ստուերները արդ-

եօք չէ՞ին իջել այստեղ, արդեօք վարուժանը իր ցեղին սիտը ու հեթանոս երգերը չէ՞ր բերել այս- տեղ, հապա Չարենցը իր «Հայաս- տան Եարով» արդեօք ձեզ հետ չի՞ ցնծում: «Գարուն Երեւան»ն է եկել այստեղ, Երեւանի վարդակերտ շէն- քերը ձեր ձեռքերի մէջ որպէս ջահեր պահած՝ պար եկէք:

Հայեր, դուք գիտէ՞ք որ այդ նոյն տասնըութ թուականին, հայոց Արմայիս արքայի Արմաւիր (Մար- դարապատ) քաղաքի առջեւ փռուած դաշտի յաղթական ճակատամար- տից մի քանի ամիս յետոյ՝ Սեպտեմ- բերի տասնըինին, հեռու, շատ հեռու լեռների Արարայի բար- ձունքներին հայերը նորէն կու- տուին թշնամուն: Մուսա Լեռան լանջերին թշնամու դէմ յաղթական ճակատամարտեր մղած վեց հարիւր դիւցազուններ հայկական լեզնոն կազմեցին, որոնց միացան տարբեր երկրների հազարաւոր Արմէն քա- ջագուններ: Հոգիներում նրանց վառ- ւում էր վրէժի հուրը, իրենց ցեղա- կիցների տառապանքի մորմոքը, խռովքը մոլեգնած ովկիանի նման ալիքում իրենց սրտերի կարմիր ծովերը: Եւ դարձեալ կուլ պիտի տային թշնամուն: Եւ այդ օրը, առաւօտեան արեգակն իր արդար շողերով տիեզերքի օրհնութիւնն էր ցանում սրտերին մարտիկների: Եւ գրոհ, կրակ բարձունքում ծուարած թշնամու պատնէշի վրայ: Հրացան- ներից պայթած կրակն էր այրում թշնամու դիրքերը, թէ հայ քաջերը ռազմի դաշտ իջած արեւի ճառա- գայթները բուռ, բուռ նետում էին թշնամու վրայ: Եւ երեկոյեան արե- գակը յաղթանակի կարմիր պատ- մուճան էր փռել թշնամու դիրքերի վրայ, կարմրել էր այն նաեւ թշնա- մու հարիւրաւոր գինտուրների պիղծ արիւնով, տասնեակ հազարաւորներ էլ գերավառուել էին: Հայեր, ահա այսպէս, կռուով, ցեղին սրտի ոգին որպէս արեւային դրօշ ծածանած՝ ճակատել թշնամու դէմ: Հայեր, ինչո՞ւ դուք ձեր աշխարհի ամէն մի շէնքում կուլ չտուիք թշնամուն եւ ձեր նահապետից ժառանգած երկրի հողը չպահպանեցիք, ափսոս, հիմա ենք հող պահանջում...: Այո նորէն կռուով, թշնամուն վճռուեցին Ար- ցախի աշխարհի հայոց ոստաններից, եւ հիմա տէրն ենք մեր նախնիների սիւնեաց Առանշահիկ արքաների աշխարհին:

Ով հայ մարդ, դու գիտե՞ս արդեօք, որ այս Մայիսի քսանըու- թին մի քանի հարիւր հազար հայեր, իրենց Արագածը գրկած միասնու- թեան պար բռնեցին նրա շուրջ բոլորը: Ի՞նչ եւ անում այստեղ, գնայի՞ր դու էլ շղթայ բռնէիր, մտնէիր պարի, պարէիր քու նախա- գահի հետ, ձեր պարի հետ Արագածն էլ իր չորս գագաթներով ցնծութիւ- նից պիտի շարժէր, նրանից հովիտ- ներ պիտի ժայթքէին՝ հայոց սրտերի հրճուանքի կարմիրը, նրա յաւեր- ժութեան պատգամը տիեզերք ճամ- բելու: Կարո՞ղ ես երկինք յարել ակներդ, տես՝ Չարենցի, Շիրազի ստուերները արեւը գրկած ինչպէս պար են գալիս, եւ իրենց գրիչները արեւի կրակով կարմրած միասնու- թեան գրի շանթեր են շողում երկ- նակամարում: Անկախութեան լոյսով պոռթկացած հայերը, իրենց հայ- եացքները դէպի իրենց ոգեղէն սիրտ Արարատին, կանչում են որ տիեզեր- յիլիոնաւորներ, իրենց կարմիր սրտե- րով գալու են նրան գրկելու՝ նրա շուրջը ծիրանի պար բռնելու:

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ «ԿՈՉ»

Շարունակուած էջ 14-էն

Ակադեմիայի մը հիմնումը Հայաս- տանի մէջ, եւ այժմ ՀԲԸ Միութեան հեռատես եւ իմաստուն ղեկավարնե- րը կ'ուզեն իրականացնել այդ երազը: Մայր Հայրենիքի մէջ որ միակ Սուրբ հողն է հայութեան, ուրիշ երկիրներ ասանջական երկիրներ են միայն: Այս ծրագրի իրագործումն է որ պիտի ըլլայ գրաւականը ապահովելու հայ լեզուն, մշակոյթը եւ վերապրումը ու զարգացումը Սփիւռքի հայ հա- մայնքներուն, ինչպէս նաեւ միջոցնե- րէն մէկը ներկայ եւ ապագայ սե- րունդներուն ազգային ինքնութիւնը պահող:

Այս հայկերտուածի Մեղգոնեան կրթական համալիրը պիտի ծառայէ սփիւռքի բոլոր գաղութներու պա- տանիներուն ու երիտասարդներուն անխտիր:

Վերջացնելէ առաջ ըսեմ թէ այդ յատկապարտութիւն «Կոչ»-ը ինձի ցաւ պատճառով լուր մը ունի: Յա եւ զարմանք պատճառով լուրը այն է որ Եւրոպայի մէջ նուիրեալ միութեան- կան, ազնուափայլ եւ յարգելի տիկին մը ՀԲԸ Միութեան ղեկավարներու մի քանիներէն նեղուած՝ ոյս ու ատելութիւն ունի եղեր... վրէժ առ- նելու համար ինք ալ միացած է այս աղմկարարներուն եւ սկսած է նիւթա-

պէս օգնել իր նոր գործակիցներուն, մոռնալով որ ժխտական ու վնասա- կար ցեխարձակումները իր սիրելի Միութեան դէմ են եւ ոչ թէ իր չսիրած մարդոց: Յիշեցնեք իրեն թէ իր միութիւնն է որ յաւերժական է: Մեր թելադրութիւնը այն է այս մտրոբեալներուն, որ դադրին աւե- լորդ միստումներ ընելէ, եւ այդ ճիգն ու նիւթական տրամադրել ազգօգուտ ծրագրիներու:

Կը մաղթեմ որ այս մարդիկը հանդարտեցնեն իրենց կիրքերը, լրջա- նան, մտածեն ու միանան ՀԲԸ Միու- թեան ազնիւ ու ազգօգուտ նպատա- կին, որպէսզի իրականանայ Մեղգոնե- ան անմահ Բարերար եղբայրներու երազը եւ շուտով կը կառուցէ Մեղգոնե- ան կրթական Համալիրը Մայր հողի վրայ եւ եկող սերունդներ հայօրէն թրծուին ու ներշնչեն արտասահմանի իրենց եղբայրներն ու քոյրերը:

ՀԲԸ Միութիւնը 103 տարուայ Բարեգործական Միութիւն մըն է եւ շատ համբերատար: Մի մոռնաք որ անհատներ ժամանակաւոր են եւ ան- ցողական իսկ Հայկական Բարեգործա- կան Ընդհանուր Միութիւնը ինչպէս նաեւ բոլոր հայկական ազգանպաստ կազմակերպութիւնները յաւերժական են որովհետեւ մեր Միութիւնը կը հաւատայ մեր ժողովուրդի ու հայրե- նիքի յաւերժութեան:

ՈՂԶՈՒՅՆ.. ՀԱԶԱ՛Ր ՈՂԶՈՅՆ

Շարունակուած էջ 5-էն

ասկէ առաջ չէիք կարօցած այս փոքրիկ, բայց հայկականութեամբ տաք ու ձեր բոլորին երբեմնի «հայրենիք»ը հանդիսացած կարօտի ու սիրոյ մայրիներու «որ» երկիրը, անշուշտ՝ ձեր հարազատներն ալ...:

Պատասխան չկալ...: Տրամադրութիւնները քիչ մը փոխուած են: Բերանները կղպուած են: Կ'ուզեմ, որ գոնէ մէկը ակնարկութիւն մը ընէ:

Յանկարծ, տարիքոտ, քիչ մը կորաքամակ հայրենակից մը, գլուխը օրօրելով մե՛ղմ-մե՛ղմ կ'ըսէ, առանց բառերը ծամծմելու.

-Ինչո՞ւ, հնարաւորութիւն ունէիք եւ չէիք ա՞նք...:

Ապա, իրար կը յաջորդեն շրթուներու մարգարէները, անշուշտ այս անգամ առանց զարմացելու:

-Վարձքերնիդ կատա՛ր, թանկագի՛ն լիբանանահայ կազմակերպութիւններ, վարձքերնիդ կատա՛ր...:

-Միթէ՞ հնարաւոր էր այդքան գումար ի մի հաւաքել...:

-Ծնորդի ձեզի Լիբանան ալ տեսայ, ծնողներս ալ, հարազատներս ալ...:

-Եթէ լիբանանեան ընտրութիւնները չըլլայի՞ն, կեանքիս մէջ երբեք չէի կրնար գալ ու այս «դրախտ երկիր»ը վերստի՞ն տեսնել...:

...

Հոս ակամայ կը փակեմ վարագոյրը: Ինձի համար վերջ կը գտնէ ամերիկայի մէջ ծանրէն կախուած տղարներու «մասալ»ները: Հայու կարօտը պիտի շարունակէ վաղը դարձեալ տանջել հոգիներ եւ սիրտեր: Մի քանի օր ետք լիբանանեան ընտրութիւնները կը վերջանան եւ մեր հին հարազատները կամ նոր «զբօսաշրջիկներ»ը կ'երթան իրենց «ատլանտեան դրախտ»ները, իրենց «ուխտերը կատարելէ ետք»... վստահաբար իրենց հետ տանելով մեր փոքրիկ երկրին ջերմ արեւը եւ մեր արեւելեան հայրենակիցներուն տաքով «բարեւ»ը, նաեւ՝ լիբանանեան համո՛վճոտո՛վ հիւրասիրութիւնը եւ... արցունքի շիթեր...:

Ձեզի, բարի ճանապարհ, յարգելի՛ զբօսաշրջիկներ:

Ծնորդակալութի՛ւն՝ ձեր հայրենասիրութեան եւ անմահաւանդ առաքելութեան:

Ձեր գալուստով ժպտաց լիբանանեան «տխոր մայրիկ», մենք ալ՝ անշուշտ... որոշ չափով:

Դարձեալ հրամմեցէք լիբանանեան երբեմնի «դժոխք»ը, ուր բարեբախտաբար

կա՛ն ու պիտի մնա՛ն հայկական աղտոր ու կեանքակալ գաղութ մը, որպէս սփիւռքահայ ազատ ու ամուր ամբոց, որուն բնակիչները մայրիներու մասն իրենց արմատները խրած են Լիբանանի ընդերքին, օրէ օր աւելի կանաչնալու եւ ծաղկեցնելու համար Հայաստանամերձ այս փոքրիկ հողը... որ հարուստ է իր ազգային կառոյցներով, եկեղեցիներով, հոգեւորականներով, միութիւններով, վարժարաններով, մտաւորականներով եւ աշխոյժ, համբերատար ու դժուարութիւններ արհամարհող ու անոնց դիմաց պատճէշող հայութեամբ: ...Թէեւ ատեցնեմք, ցաւ ի սիրտ, որ «Լիբանանեան ընտրութիւններ»ը, այսօր պատճառ հանդիսացան, որպէսզի քիչ-կ'մը բեւեռացուին լիբանանահայերը իրարու միջեւ, դժբախտաբար... բայց վաղը, վստահաբար, անոնք կ'օգտագործեն լուրջ խոհակաւորութիւն, կրկին կ'ողջագործուին, դարձեալ՝ կը համբարտուին «Յուսիսեան տաք»երէն... եւ «բաղաբալան մարգարէ»- ներէն վերջ, իրարու ձեռք կը սեղմեն արիաբար, միշտ հաւատալով, «Միութիւնը գործութիւն է» կարգախօսին...:

Մեր հայկական ջրաղացը կը դառնայ վազող բոլոր առուներու ջուրերուն միացումով...:

Վստա՛հ...: